

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԳԱԼՍՏԱՆ Մ. Վ.**

Հայաստանի բնակչության ներկայիս արտաքին միգրացիոն գործընթացի պատճառները վերլուծելիս մասնագետներն առաջին հերթին այն պայմանավորում են հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակով: Անշուշտ, առկա գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի բացակայությունը որոշակի դեր ունեն վերջին տարիներին մեծ մասշտաբներ<sup>1</sup> ընդունած՝ հանրապետությունից բնակչության արտագաղթի հարցում<sup>2</sup>: Բայց կարևորելով այդ խնդիրը՝ երբեմն պատշաճ չի արժևորվում սոցիալական ցանցերի դերը այդ հարցում: Մասնավորապես ուշագրավ է, թե սոցիալական ցանցերն ինչ դեր ունեն Հայաստանից միգրացիոն հոսքերի ձևավորման և ընդլայնման, տեղափոխման ծախսերի և ռիսկերի նվազեցման, միգրացիայից ակնկալվող օգուտների մեծացման, այլեթնիկ միջավայրում նրանց ինտեգրման և անդրմշակութայնացման հարցերում<sup>3</sup>: Նախ անդրադառնանք այն խնդրին, թե ինչ ենք հասկանում սոցիալական ցանցեր ասելով, և ինչ մոտեցումներ են առկա դրա վերաբերյալ: Առավել տարածված է այն տեսակետը, որ սոցիալական ցանցերը դիտարկվում են որպես միջանձային կապերի մի ամբողջական համախումբ, որը ուղարկող և ընդունող երկրներում միավորում է հին և նոր միգրանտների և ոչ միգրանտ ընտանիքներին՝ ազգակցական, բարեկամական, ընկերային, հարևանային գործոնների հիման վրա: Դրանք այն կապերը և հարաբերություններն են, որոնք արդեն մեկնած միգրանտները պահպանում են ծագման երկրում մնացած իրենց ընտանիքի անդամների,

<sup>1</sup> 2002-2010 թթ. հանրապետությունից արտաքին միգրացիայի բացասական մնացորդը կազմել է 57.5 հազար մարդ<sup>1</sup>: Մինչդեռ վերջին երկու տարիների ընթացքում այդ ցուցանիշը ավելացել է. բացասական մնացորդը՝ 86.6 հազ. մարդ, Միջազգային սահմանահատումների ծավալները 2000-2012 թթ., ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն, [www.smsta.am](http://www.smsta.am)

<sup>2</sup> Ըստ Ազգային վիճակագրական ծառայության 2012 թ. տվյալների՝ հանրապետության գործազուրկների թիվը 2010 թ. կազմել է 278.2 հազ. մարդ, իսկ 2011 թ.՝ 265.7 հազ. մարդ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2012, <http://www.armstat.am/am/?nid=82&id=1411>

<sup>3</sup> Նյութերը հավաքվել են 2006-2012 թթ. Հայաստանի 7 մարզերի 11 քաղաքային և 23 գյուղական բնակավայրերում: Հարցաթերթային հարցումներն իրականացվել են շուրջ 700 միգրանտ ունեցող ընտրանքներում, իսկ խորացված հարցազրույցները՝ 73 միգրանտների հետ:

բարեկամների, ընկերների, ծանոթների հետ<sup>4</sup>: Այդ կապերը պայմանավորում են միգրանտների ծագման և ընդունող հասարակությունների միջև հաղորդակցությունը և սոցիալական ու մշակութային կապիտալի շրջանառությունը: «Սոցիալական կապիտալը» փաստական կամ վիրտուալ ռեսուրսների հանրագումար է: Դրանք կուտակվում են մարդու կամ խմբի համար՝ շնորհիվ նրանց կողմից ընդհանուր ծանոթությունների և ճանաչման առավել կամ քիչ ինստիտուցիոնալ կապերի ամուր ցանցերի տիրապետման<sup>5</sup>: Մարդիկ սոցիալական ցանցերի մուտքի թույլտվություն են ստանում միայն ցանցերի և սոցիալական հաստատությունների անդամության միջոցով, այնուհետև փոխարկելով կապիտալի այլ ձևերի՝ սեփական դիրքը հասարակության մեջ ամրապնդելու համար<sup>6</sup>: Միգրանտը ոչ թե սոսկ պետության սահմաններ հատող է, այլ սոցիալական հարաբերությունների և ինստիտուտների մի համակարգից տեղափոխվող մեկ ուրիշ համակարգ, որտեղ նա, մնալով հին սոցիալական ցանցերում, նոր միջավայրում ներգրավվում է նոր սոցիալ-մշակութային հարաբերություններում: Մյուս մոտեցման կողմնակիցները նշում են, որ սոցիալական ցանցերի առկայությունը նպաստում է միգրացիայի մեկնելու վերաբերյալ նրանց որոշումների կայացման հնարավորությունների և հասանելիության ընդլայնմանը: Դրանք դիտարկվում են դեպի դուրս, դեպի սոցիալական այլ շրջանակներ տանող ուղիներ և այդ կապակցությամբ օգտագործում են « ցանցերով միջնորդավորված միգրացիա» եզրույթը և դրանով իսկ ուզում են ընդգծել ցանցերի ազդեցությունը միգրացիայի որոշման վրա<sup>7</sup>: Այդ ցանցերի զարգացման շարժունակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ էթե այլ երկիր մեկնող առաջին միգրանտները չունենին որևէ սոցիալական կապ, ապա միգրացիայի առաջին ալիքից հետո հաջորդների համար դժվարությունները մեղմանում են՝ ի հաշիվ այդտեղի բարեկամների և հարազատների: Հիմնվելով ավելի վաղ միգրացիայի ուղին բռնած ազգականների և բարեկամների սոցիալական կապերի վրա՝ ոչ միգրանտները նոր տեղում հնարավորություն են ունենում ստանալու գիտելիքներ և օգնություն<sup>8</sup>: Այդ կապերը բնութագրվում են որպես «հովանավորվող» միգրացիա, միգրացիոն շղթաներ, միգրացիոն գործընթացներում «ընտանեկան և բարեկամական» ազդեցություն: Այսպիսով, էթե համայնքից, ընտանիքից, ազգակիցներից որևէ մեկը միգրացիայի ուղին է բռնում, ապա նրանց սոցիալական կապերը փոխանակվում են մի այնպիսի ռեսուրսի, որը արտերկրում զբաղվածության և այլ հարցերի լուծման հնարավորություն է ստեղծում: Սա հիմք է նաև միասնական պատճա-

<sup>4</sup> Massey D., Arango J., Hugo G., Kouaouci A., Pellegrino A., Taylor J. E. *Worlds in Motion: Understanding International Migration at the End of the Millennium*, Oxford, 2005, p. 64.

<sup>5</sup> Садовская Е. Ю. Социология миграций и современные западные теории международной миграции (Социальная политика и социология, 2004, N 1, с. 86).

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>7</sup> Wilson T. D. *What Determines Where Transnational Labor Migrants Go? Modifications in Migration Theories*, *Human Organization*, N 53(4), 1994, p. 272.

<sup>8</sup> Садовская Е. Ю., նշվ. աշխ., էջ 86:

ռականության հայեցակարգի տեսության ձևավորմանը, ըստ

որի, միջազգային միգրացիան ժամանակի ընթացքում նպաստում է դրա աստիճանական ընդլայնման հնարավորության զարգացմանը: Պատճառականությունը միասնական է այն իմաստով, որ միգրացիայի յուրաքանչյուր գործողություն փոխում է դրա սոցիալական համատեքստը, որտեղ հետագա միգրացիային մասնակցելու որոշումներն ընդունվում են այնպիսի ճանապարհով, որոնք ուժեղացնում են լրացուցիչ միգրացիայի հավանականությունը<sup>9</sup>: Սոցիալական ցանցերի դերը և դրանց նշանակությունը քննարկվում է նաև այլեթնիկ միջավայրում միգրանտների ձուլման տեսանկյունից: Ըստ ձուլման տեսության կողմնակիցների՝ պետությունը դիտարկվում է որպես որոշակի սահմաններով պարփակված սոցիալական տարածություն: Դրա սահմանահատման դեպքում միգրանտը պետք է միանշանակորեն փոխակերպվի և ընդունի սահմանների ներսում գոյություն ունեցող մշակութային արժեքները, որպեսզի կարողանա ձուլվել այդ հասարակությանը: Ըստ այդ տեսության՝ համայնքը սերտորեն կապված է տարածքի հետ: Տարածքի հետ կապը բնորոշվում է առանձնահատուկ տեղային մշակույթի գոյությամբ: Ընդունող հասարակության մի մասը դառնալու համար միգրանտները պետք է հարմարվեն տեղական մշակույթին: Այս տեսությունը չի կարևորում տեղի և էթնիկ սոցիալական ցանցերում միգրանտների ընդգրկվածության հարցը, որը կարող է նպաստել այլեթնիկ միջավայրում միգրանտների ինտեգրմանը: Մինչդեռ այդ հարցում այլ կարծիք ունեն անդրմշակութայնացման տեսության կողմնակիցները: Նրանք առաջարկեցին «անդրմիգրանտներ», «անդրազգայնություն», «անդրմշակութայնություն» հասկացությունները՝ որպես միգրացիայի միջազգային հետազոտություններում նոր հարացույցի հիմք: Ըստ այդմ՝ անդրազգայնությունը սոցիալական գործընթաց է, որտեղ միգրանտները ստեղծում են սոցիալական դաշտ՝ անցնելով բոլոր տեսակի աշխարհագրական, մշակութային և քաղաքական սահմանները: Միգրանտները ոչ թե ամբողջությամբ յուրացնում են ընդունող հասարակության մշակույթը, այլ ձևավորում են խառնուրդ մշակույթ՝ ընդգրկելով թե՛ ծագման և թե՛ ընդունող հասարակության մշակույթները: Միգրանտները դառնում են անդրմիգրանտներ, երբ «զարգացնում և պահպանում են ընտանեկան, տնտեսական, սոցիալական, կազմակերպական, կրոնական և քաղաքական հարաբերությունները՝ անցնելով բոլոր տեսակի սահմանները»<sup>10</sup>: Անդրմիգրանտները միաժամանակ ապրում են մի քանի տարածքում և ներառվում մի քանի հասարակությունում, սակայն առանձնահատուկ կապված են իրենց ազգային պետությանը և տարածքին: Նոր միջավայրում նրանք ձևավորվում են նոր սո-

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>10</sup> **Кайзер М., Бредникова О.** Транснационализм и транслокальность (комментарии к терминологии) [(Миграция и национальное государство (под ред. Бараулиной Т. и Карпенко О.), СПб., 2004, с. 133-146, [http://cisr.ru/files/publ/Migr\\_Kaiser\\_Brednikova.pdf](http://cisr.ru/files/publ/Migr_Kaiser_Brednikova.pdf)

ցիալական կապեր՝ շարունակելով գործել նախկին հասարակության սո-

ցիալական ցանցերում: Այս տեսությունը անդրձակութայնության ձևավորման գործում կարևորում է սոցիալական ցանցերի դերը: Այս առումով հատկապես ուշագրավ են հետևյալ խնդիրները.

- արտերկրում հայկական սոցիալական ցանցերի ձևավորման պատմությունը.
- ինչ դեր ունեն սոցիալական ցանցերը Հայաստանից արտաքին միգրացիայի արտամղող և ձգող գործոնների համակարգում: Արդյոք ազդում են դրանք միգրացիայի մեկնելու որոշումների ընդունման վրա.
- ինչ ազդեցություն ունեն դրանք Հայաստանից արտաքին միգրացիոն ուղղությունների վրա.
- այդ ցանցերը նվազեցնո՞ւմ են միգրանտների տեղափոխման ծախսերը, ռիսկերը և մեծացնո՞ւմ են օգուտները.
- ինչ դեր ունեն դրանք աշխատանք գտնելու, կացարանով ապահովելու, սոցիալ-իրավական ապահովվածության առումով.
- այդ ցանցերը, որպես սոցիալական կապիտալի դրսևորման ձև, դառնո՞ւմ են արդյոք վստահելի միգրանտների համար, և ի՞նչ խնդիրներ են ծագում այդ հարցում.

– սոցիալական ցանցերը և այլ էթնիկ միջավայրին ինտեգրվելու խնդիրները:

Հետազոտության արդյունքներով արտերկրում հին միգրանտների և ոչ միգրանտ ընտանիքների կողմից սոցիալական ցանցերի ձևավորման գործընթացը կարելի է բաժանել երեք փուլի. 1) XX դարի 60-70-ական թթ.: Այդ փուլում Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններից ամեն տարի արտագնացության մեկնողների թիվը շուրջ 25-30 հազար մարդ էր: «Մի ունեցիր հարյուր ռուբլի, այլ ունեցիր հարյուր բարեկամ» հայտնի ասացվածքը դարձել էր կարևոր սկզբունք այդ շրջանի սոցիալական ցանցերի ձևավորման հարցում: Այսինքն՝ դրանց մի մասը ձևավորվել է դեռևս խորհրդային տարիներին, երբ հատկապես Շիրակի, Գեղարքունիքի և Լոռու նախկին տարածաշրջաններից երկար տարիներ ՌԴ և խորհրդային այլ հանրապետություններ սեզոնային աշխատանքի են մեկնել ներկայիս միգրանտների առաջին սերունդները: Այսպես, ըստ 1983 թ. պաշտոնական վիճակագրական տվյալների, նախկին Կալինինոյի շրջանից ՌԴ և խորհրդային այլ հանրապետություններ արտագնա աշխատանքի է մեկնել 3173 մարդ, Մարտունու շրջանից՝ 2739, Ախուրյանի շրջանից՝ 2201, Արթիկի շրջանից՝ 1595, Սպիտակի շրջանից՝ 1109, Կամոյի շրջանից՝ 614 մարդ<sup>11</sup>: Իսկ որոշ մասն էլ հետագայում հաստատել է մշտական բնակություն և այլ էթնիկ միջավայրում տեղական իշխանությունների հետ ստեղծել ուղղահայաց և հորիզոնական կապերի լայն ցանց: Այդ սերունդը համարվում է ոչ միայն աշխատանքային միգրացիայի ավանդույթ-

<sup>11</sup> О полноте учета миграции населения Армянской ССР в 1983 г., Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչություն, 19.01.1984, N 12-11-1:

ների կրողը, այլև սոցիալական այդ ցանցերի ձևավորողն ու վերարտադրողը: Նրանց մի մասն ընդգրկվեց տեղական սոցիալական ցանցերում,

մյուս մասն օտար միջավայրում հիմք դրեց ներէթնիկ ցանցերի ձևավորմանը, որը միավորում էր Հայաստանից նույն ծագում ունեցող խմբերին (մարտունեցիներ, լոռեցիներ, շիրակցիներ և այլն): 2) Մինչև 1990-ական թթ. Հայաստանից զինվորական ծառայության, կրթության, ամուսնության և այլ պատճառներով արտերկրում բնակություն հաստատածներ և նրանց ձևավորած սոցիալական ցանցերը: 3) 1990-ական թթ.-ից հետո ձևավորած սոցիալական լայն ցանցերը: Դրա հիմքը հետխորհրդային Հայաստանի բնակչության արտաքին միգրացիայի թվի կտրուկ աճն էր շուրջ երեքից չորս անգամ, որը նոր ազդակ դարձավ այլէթնիկ միջավայրերում հայկական սոցիալական ցանցերի ձևավորման համար: Անդրադառնանք այն խնդրին, թե ինչ դեր ունեն սոցիալական ցանցերը Հայաստանից արտաքին միգրացիայի արտամղող և ձգող գործոնների համակարգում: «Որո՞նք են արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառները» հարցին մասնակիցների գերակշռող մեծամասնությունը համարել է Հայաստանում գործազրկության բարձր մակարդակը և տեղում աշխատանքի բացակայությունը (81%): Այսինքն՝ գործազրկությունը և աշխատատեղերի բացակայությունը համարվում են Հայաստանից աշխատանքային միգրացիայի արտամղող գործոն: Բայց այս գործոնը դեռևս բավարար պայման չէ աշխատանքային միգրացիայի մեկնելու համար: Անհրաժեշտ են նաև ձգող պայմաններ, որոնք այս պարագայում համարվում են արտերկրում, մասնավորապես ՌԴ-ում, ֆորմալ և ոչ ֆորմալ միջանձային կապերի վրա ձևավորված սոցիալական ցանցերը: Հետազոտությունից պարզվեց, որ այդ ցանցերի ձևավորման հիմքը Հայաստանում և ՌԴ-ում նրանց ազգակցական, բարեկամական, հարևանային կապերն են, որոնք Հայաստանից աշխատանքային միգրացիայի մեկնելու որոշումների կայացման վրա ունենում են խթանող ազդեցություն: Այն հարցին, թե « Հիմնականում ում օգնությամբ էիք մեկնել արտագնա աշխատանքի», պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.

Աղյուսակ 1

Աշխատանքային միգրացիային աջակցող միջոցները և հանգամանքները

Պատասխաններ	%
Հայաստանում գտնվող ընկերներ, ծանոթներ	11.9
Հայաստանում գտնվող հարազատներ, բարեկամներ	19.1
Ինքնուրույն	9.5
Արտերկրում գտնվող/բնակվող ընկերներ, ծանոթներ	28.4
Արտերկրում գտնվող/բնակվող հարազատներ, բարեկամներ	23.9
Հայաստանում գտնվող աշխատանքի տեղավորման գործակալություններ	3.0
Արտերկրում գտնվող ֆիրմաներ	3.0
Այլ	1.1

Աղյուսակ 1-ում բերված տվյալների համաձայն՝ աշխատանքային միգրացիայի խթանման հարցում դեռևս էական դեր չեն կատարում Հայաստանի և արտերկրի աշխատանքի տեղավորման գործակալությունները, քանի որ դրանց միջոցով աշխատանքի է մեկնել միայն միգրանտների համապատասխանաբար 3%-ը: Նրանք դեռևս դրանց չեն համարում հուսալի գործընկեր և աշխատանքի տեղավորման վստահելի աղբյուր: Մինչդեռ աշխատանքի տեղավորման հարցում օգնում են տեղում և արտերկրում հարազատները, բարեկամները, ծանոթները, ընկերները, որոնց միջոցով մասնակիցների շուրջ կեսը գտնում է աշխատանք:

Սոցիալական այդ ցանցերն իրենց ազդեցությունն են թողնում Հայաստանից արտաքին միգրացիայի ուղղությունների վրա և երկրի ընտրության հարցում: Այն հարցին՝ « Հասկապես ինչո՞ւ ընտրեցիք այդ երկիրը», մասնակիցների 49%-ը նշել է ընտանիքի անդամներ, բարեկամներ, ընկերներ և ծանոթներ ունենալու հանգամանքը:

Աղյուսակ 2

Միգրանտների կողմից երկրի ընտրության պատճառները

Պատասխաններ	%
Այնտեղ են ապրում բարեկամներ, ընտանիքի անդամներ	24.6
Այնտեղ ունեի ընկերներ, ծանոթներ	24.4
Հեշտ էր աշխատանք գտնել	21.8
Այնտեղ լավ են վճարում	11.1
Գիտեի լեզուն	8.8
Այնտեղ մեկնելն ավելի հեշտ էր	3.8
Այլ	5,5

Ինչ վերաբերում է երկրների ընտրությանը, ապա Հայաստանից արտագնացների 85.5%-ը աշխատանքի է մեկնել իրենց համար դեռևս ամենագրավիչ երկիրը համարվող Ռուսաստանի Դաշնություն: Դա առաջին հերթին պայմանավորված է ՌԴ աշխատաշուկայում ազատ աշխատատեղերի առկայությամբ, կարճ ժամկետներում բարձր եկամուտների ձեռքբերմամբ, ՌԴ-ի վերաբերյալ համեմատաբար բարձր տեղեկացվածությամբ և այնտեղ հասնելու մատչելիությամբ, լեզվական արգելքների բացակայությամբ և ՌԴ-ում շուրջ 1մլն հայկական համայնքի առկայությամբ<sup>12</sup>: Միգրանտների 3.1%-ը աշխատանքի է մեկնել Ուկրաինա, 3.3%-ը՝ Ղազախստան: 1990-ական թթ. հետո ընդլայնվել են արտագնացության մեկնողների աշխարհագրական սահմանները: Այսպես, բացի ԱՊՀ-ից, նրանց 2.6%-ը աշխատանքի է մեկնել Լեհաստան, 2.0%-ը՝ Հոլանդիա, 1.3%-ը՝ Բելգիա, 1.0-ը՝ ԱՄՆ, 0.7%-ը՝ Ավստրիա, 0.7%-ը՝ Գերմանիա, 0.3%-ը՝ Հունաստան: Սոցիալական այդ ցանցերը վերածվում են հանրապետությունից շղթայական արտագաղթի ձևավորման կարևոր աղբյուրի, որը կանխորոշում է Հայաստանից դուրս բնակչության միգրացիոն ուղղվածությունը: Այսպես, 1970-ական թթ. մինչև այժմ Գերարքունիքի մարզի

<sup>12</sup> Тер-Саркисянц А. Армяне в России (Армяне. Народы и культуры, М., 2012, с. 554).

Մարուխան գյուղի բնակչության երրորդ սերունդը հիմնականում արտագնացության է մեկնել այն բնակավայրերը, որտեղ տարիներ շարունակ մեկնել են նրանց պապերը և հայրերը: Նրանք հիմնականում մեկնում են Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ, Չելյաբինսկ, Սարատով, Վոլգոգրադ, Սոչի, Նիժնի Նովգորոդ, Տյումեն, Եկատերինբուրգ քաղաքները և դրանց մարզերը: Օրինակ, միայն Նիժնի Նովգորոդում Մարուխան գյուղից, շնորհիվ արտագնա աշխատանքի, մշտական բնակություն է հաստատել մոտ 400 ընտանիք: Նույն գործընթացն է դիտարկվում նաև Շիրակի մարզում: Օրինակ, Ազատան գյուղի յուրաքանչյուր երկրորդ տնտեսությունն արտագնաց ունի Հեռավոր Արևելքում՝ Յակուտիայում, իսկ Փանիկ գյուղից հիմնականում մեկնում են Իրկուտսկի և Չիտայի մարզեր: Ի տարբերություն Գեղարքունիքի, Շիրակի և Կոտայքի մարզերի՝ մինչև 1990-ական թվականները Վայոց ձորի մարզից աշխատանքի նպատակով հանրապետությունից դուրս տեղաշարժերը համարյա չեն դիտարկվել և կազմել են շատ ցածր տոկոս: Բայց 1990-ական թվականներից հետո մարզի աշխատունակ բնակչությունը սկսեց աշխատանք փնտրել հանրապետությունից դուրս: Օրինակ, 1992 թվականից հետո Արենի գյուղից մի քանի երիտասարդներ առևտուր անելու նպատակով մեկնել են Ռուսաստանի Դաշնության Կրասնոյարսկի մարզ և հետագայում հաստատվել են այնտեղ: Հետո տարել են իրենց ընտանիքներին, այնուհետև հարազատներին, բարեկամներին, ընկերներին, և ներկայումս գյուղից այնտեղ մշտական բնակություն է հաստատել շուրջ 52 ընտանիք: Այնտեղ նրանք ոչ միայն զբաղվում են առևտրով, այլև ամեն տարի գյուղից մի քանի շինարարական բրիգադներ են տանում: Գյուղից աշխատունակ տարիքի տղամարդիկ սեզոնային աշխատանքի են մեկնում նաև Մոսկվայի մարզ: Նույն մարզի Ելփին գյուղի 2 եղբայրներ, որոնք մշտական բնակություն են հաստատել Ամուրի մարզում, ամեն տարի միայն Արենի գյուղից շուրջ 70-80 տղամարդկանց տարել են Նախոդկա՝ շինարարությունում աշխատելու համար: Այսինքն, եթե փորձենք քարտեզագրել Հայաստանից մեկնող խմբերի միգրացիոն տեղաշարժերը, ապա կտեսնենք, որ շնորհիվ այդ ցանցերի՝ Հայաստանի յուրաքանչյուր բնակավայր ունի իր միգրացիոն ուղղությունները, որի հետևանքով նրանց մի մասը հանրապետությունից դուրս ՌԴ-ում ձևավորում են նաև իրենց « նոր համայնքները »՝ մշտական բնակություն հաստատելով այդ բնակավայրերում: Անդրադառնանք այն խնդրին, թե այդ ցանցերը արդյոք նվազեցնում են միգրանտների տեղափոխման ծախսերը, ռիսկերը և մեծացնում օգուտները:

Աղյուսակ 3

Մեկնելուց առաջ որոշակի հարցերի շուրջ « կանչողի հետ» ձեռք բերած պայմանավորվածությունը

Պատասխաններ	%
Գրանցման	10.0
Վիզայի	2.1
Աշխատավարձի չափերի	22.0
Աշխատանքային պայմանների	16.7
Կացարանի	23.7

Մննդի	4.8
Բժշկական սպասարկման	10.0
Հանգստի	4.5
Այլ	6.2

Հետազոտությունից պարզվեց, որ մասնակիցների շուրջ մեկ քառորդի տեղափոխման ծախսերը հոգացել է արտագնա աշխատանքի «կանչողը»՝ հետագայում աշխատավարձից պահելու կամ վերադարձնելու պայմանով, իսկ շուրջ 15%-ի համար՝ այնտեղ ապրող իրենց ընտանիքի անդամները, հարազատները: Նման օգնությունը միգրանտները դրական են գնահատել, քանի որ ճանապարհածախսի համար ստիպված չեն եղել բանկերից տոկոսով կամ պարտքով փող վերցնել, ոսկի գրավ դնել և այլն: Այս առումով սոցիալական ցանցերը նվազեցնում են միգրանտների տեղափոխման ծախսերը: Արտագնա աշխատանքի մեկնելու ռիսկը կապված է նաև արտագնա աշխատանքի վայրում նրանց փաստաթղթերի ձևակերպման հետ. այստեղ ևս որոշակի դրական դեր ունեն այդ ցանցերը: Բացի փաստաթղթերի ձևակերպումից, մինչև մեկնելը նրանք բանավոր պայմանավորվածություն են ձեռք բերում կացարանի, աշխատավարձի չափերի, աշխատանքի պայմանների և այլ հարցերի շուրջ (Աղյուսակ 3):

Անշուշտ, արտերկրում գտնվող գործատուների և Հայաստանից մեկնող միգրանտների միջև առկա է զգալի տարածական հեռավորություն, և այդպիսի բանավոր պայմանավորվածությունները միայն հիմնվում են վստահության գործոնի վրա: Ըստ հետազոտության արդյունքների՝ փոխվստահության գործոնը առկա է նաև միգրանտ-գործատու գրավոր աշխատանքային պայմանագրերի կնքման հարցում, որոնք մեծ մասամբ բացակայում են:

Աղյուսակ 4

Միգրանտների և գործատուների միջև պայմանագրի առկայությունը

Պատասխաններ	%
Այո	7.5
Հավանաբար այո	17.2
Ոչ	47.7
Հավանաբար ոչ	7.1
Դժվարանում եմ պատասխանել	20.5

Աղյուսակ 4-ից պարզ է դառնում, որ աշխատանքային միգրանտների շուրջ 54.8%-ը կատարվող աշխատանքի համար չի ունեցել կնքված գրավոր պայմանագիր: Միայն նրանց 24.7%-ն է նշել, որ իրենց աշխատանքը կատարվել է կնքված գրավոր պայմանագրով, իսկ 20.5%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին: Ընդհանրապես, պետք է նշել, որ աշխատանքային պայմանագրի վերաբերյալ միգրանտների տեղեկացվածությունը մնում է շատ ցածր: Բացի դրանից, աշխատանքային միգրանտները իրենք չեն պահանջում այդ պայմանագրերը, քանի որ պահանջելու դեպքում բրիգադիրը նրանց չի ընդգրկի արտագնա խմբում: Քննարկենք նաև այն հարցը, թե այդ ցանցերը՝ որպես սոցիալական կապիտալ, որքանո՞վ են վստահելի միգրանտների համար,



և ի՞նչ խնդիրներ են ծագում այդ հարցում: Հետազոտության արդյունքներով արտագնա աշխատանքից վերադարձածների 40.8%-ը, գնահատելով այդ պայմանավորվածությունը, իր գոհունակությունն է հայտնել և համարել լիովին իրականացված: Դրա վերաբերյալ այլ է հարցվածների 59.2%-ի գնահատականը, քանի որ նրանցից 49.8%-ի կարծիքով նախօրոք ձեռք բերված պայմանավորվածությունն իրականացվել է ոչ ամբողջապես, իսկ 9.4%-ի կարծիքով՝ ընդհանրապես չի իրականացվել: Նրանք իրենց համարում են խաբված, քանի որ «կանչողը» չի կատարել նախօրոք տված իր խոստումները: Հարցազրույցներից պարզվեց, որ դրանց գերակշռող մասը վերաբերում է կատարված աշխատանքի դիմաց աշխատավարձ չվճարելուն կամ պակաս վճարելու խնդրին: Հարցման մասնակիցներն այդ կապակցությամբ բերում էին մի շարք օրինակներ. ամիսներ շարունակ աշխատել են վաղ առավոտից մինչև ուշ գիշեր՝ օրական միջին հաշվով 11-13 ժամ, կատարել են ծանր ֆիզիկական աշխատանք, բայց նրանց խաբել և աշխատավարձ չեն վճարել: Իսկ հարցվածների որոշ մասը մուտքի երկիր մեկնելուց հետո չի ունեցել աշխատանք և ստիպված երկար ժամանակ ենթարկվել է պարապուրդի: Բացի դրանից, նրանց շուրջ կեսը բնակվել է այն նույն օբյեկտներում, որտեղ նրանք միաժամանակ աշխատել են: Դրանք հիմնականում կիսակառույց շինարարական կառույցներ են, որտեղ չկան կենցաղային տարրական պայմաններ, որի հետևանքով երբեմն ձեռք են բերում հիվանդություններ: Այսինքն՝ տարածված այն տեսակետը, որ սոցիալական ցանցերը միգրանտների համար հիմնականում կատարում են դրական գործառույթներ, այնքան էլ իրականությանը չի համապատասխանում: Դրանք ոչ բոլոր դեպքերում են դառնում հուսալի և վստահելի միգրանտների համար, հատկապես եթե գործատուները հայեր են, որոնք օգտվելով գործատու-միգրանտ աշխատանքային պայմանագրերի բացակայությունից՝ հետագայում չեն կատարում ձեռք բերված բանավոր պայմանավորվածությունը: Հետևաբար աշխատանքային միգրանտները չեն կարող պաշտպանել իրենց իրավունքները, որը նրանց դարձնում է առավել խոցելի: Անդրադառնանք նաև այն խնդրին, թե սոցիալական ցանցերը ինչ դեր ունեն այլեթնիկ միջավայրին միգրանտների ինտեգրման հարցում: Հետազոտության արդյունքներից պարզվեց, որ աշխատանքային միգրանտների մի մասի՝ ընդունող հասարակություններում շփումները սահմանափակ են, որի հետևանքով մշակութային տարրերի փոխանակումներն երբեմն ունենում են նեղ շրջանակներ: Շփումների սահմանափակության հետևանքով նրանք չեն կարողանում ընդգրկվել տեղական սոցիալական և դրսում ձևավորված հայկական էթնիկ ցանցերում:

Նրանք, ովքեր ունեն երկար տարիների «արտագնա աշխատանքի ստաժ», ունեն օրինական գրանցում, տիրապետում են լեզվին և ինտենսիվորեն են շփվում տեղի բնակչության հետ, հեշտությամբ են կարողանում ընդգրկվել տեղական սոցիալական ցանցերում, կարողանում են շուտ հարմարվել այլեթնիկ միջավայրին: Ստեղծելով անդրմշակութային մի նոր տարածք՝ միաժամանակ կրում են իրենց ազգային և ընդունող հասարակության մշակութային արժեքները: Աշխատանքային միգրացիայի հետևանքով 1990-ական թվականներից հետո ՌԴ-ում ձևավորվեցին հայկական նոր հա-

մայնքներ, որոնց համար մեծ դեր կատարեցին ձևավորված հայկական ներկերնիկ ցանցերը (ջավախքցիներ, գյումրեցիներ, մարտունեցիներ, լոռե-

ցիներ և այլն): Այսպիսով, ամբողջացնելով սոցիալական ցանցերի դերը Հայաստանից աշխատանքային միգրացիայի հոսքերի ձևավորման գործում, կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները.

- Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական պայմանները դառնում են արտաքին միգրացիայի արտամղող գործոն, սակայն դրանք վերածվում են գործողության միայն այն ժամանակ, երբ գոյություն ունեն որոշակի սոցիալական ցանցեր, որոնք նպաստում են միգրացիայի մեկնելու վերաբերյալ նրանց որոշումների կայացման հնարավորությունների և հասանելիության ընդլայնմանը:

- Սոցիալական ցանցերի առկայությունը դառնում է նոր միգրանտներ ընդգրկելու և երկրից նոր արտահոսքի ձևավորման կարևոր հնարավորություն:

- Միգրացիայի մասին որոշում կայացնող անձը ունենում է ոչ թե մեկ, այլ մի քանի ուղղության ընտրություն: Շնորհիվ սոցիալական ցանցերի՝ մարդը կարող է հայտնվել մի երկրում, այնուհետև աջակցել մեկ այլ երկիր տեղափոխվելուն:

- Սոցիալական ցանցերը միգրանտների որոշ մասի համար նվազեցնում են տեղափոխման ծախսերը, ռիսկերը և մեծացնում միգրացիայից ակնկալվող օգուտը:

- Այդ ցանցերը, որպես սոցիալական կապիտալի դրսևորման ձև, ոչ բոլոր դեպքերում են միգրանտների համար դառնում հուսալի և վստահելի՝ հարուցելով մի շարք խնդիրներ:

- Այդ ցանցերի ինստիտուցիոնալացման և ընդլայնման հետևանքով պետությունը գրեթե չի կարողանում կառավարել միգրացիոն հոսքերը, քանի որ ցանցերի ձևավորման գործընթացը դուրս է պետության վերահսկողությունից: Արտաքին միգրացիոն հոսքերի հետագա կառավարման առումով Հայաստանի կառավարությունը սոցիալական ցանցերի հետ կապված կարող է բախվել լուրջ խնդիրների:

- Սոցիալական ցանցերը նպաստում են անդրմշակութային մի նոր տարածքի ձևավորման, երբ միգրանտները միաժամանակ կրում են իրենց ազգային և ընդունող հասարակության մշակութային արժեքները:

- Այլէթնիկ միջավայրում ձևավորված այդ ցանցերը նպաստում են նոր միգրանտների ինտեգրման, վարքագծային նորմերի վերահսկողության, դրսի ճնշումների հաղթահարման և այլ կարևոր խնդիրների լուծմանը:

## **СОЦИАЛЬНЫЕ СЕТИ И ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ТРУДОВОЙ МИГРАЦИИ ИЗ АРМЕНИИ**

**ГАЛСТЯН М. В.**

### **Резюме**

При исследовании современных миграционных процессов, в которые вовлечено население Армении, роль социальных сетей нередко недооценивается. Социальные сети являют собой совокупность межличностных связей, объединяющих мигрантов из Армении на основе родственных, дружеских, соседских связей, которые обеспечивают коммуникацию, оборот социального и культурного капитала мигрантов поставляющих и принимающих обществ.

Исследования выявляют, что формируемые трудовыми мигрантами в РФ и других странах социальные сети играют важную роль в расширении миграционных потоков из Армении, в снижении рисков и увеличении ожидаемых доходов от миграции, а также в вопросах интеграции мигрантов в иную этническую среду, однако социальные сети не всегда являются надежным фактором в решении ряда проблем трудовой миграции.

## **SOCIAL NETWORKS AND THE PECULIARITIES OF LABOUR MIGRATION FORMATION IN ARMENIA**

**M. GALSTYAN**

### **Abstract**

Debates on current migration trends in Armenia do not sufficiently highlight the role of social networks. Social networks are sets of interpersonal ties that connect migrants, former migrants and non-migrants in origin and destination countries through ties of kinship, friendship, and shared community. These connections guarantee migrants' communication between the country of origin and destination country, as well as the circulation of social and cultural capital. The results of the present research demonstrate that social networks formed by labour migrants in the Russian Federation and other countries have an important role in formation, expansion and risk reduction in current labour migration trends in Armenia, and help the integration process. However, not in all cases should social networks be trusted in solving migration-related problems.